

Թերթ կը գրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱՅԱՆՔԻՆ

Ի Պոպարիա

Տարեկ 10 ֆր.

Վեցամս 5 "

Արտասահման


Տարեկ 12 ֆր.

Վեցամս 6 "

Ամերիկա

2 Տոլ. 30 սենդ

ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ  
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN  
PAPAZIAN  
YILDIZ TABIA  
VARNA  
BULGARIE

ՅԱՐԱԹԱՎԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵՅՏԱԿԱՆ

ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

2. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 31 ՉՈՐԵՔԱՅԹԻ 1902

ԹԻԻ 258

### ԾԱՆՈՒԾՈՒՄ

Ուսումնական խորհուրդէն վկայուած ուսուցիչ մը պատրաստ է պաշտօն ստանձնել Պուլկաբիոյ աղցային վարժարանաց մէջ:

Դիմել խմբագրութեանս:

### ՄԻ ԼՔԱՆԵՔ

Հայելիի վերջին թիւին մէջ լուր մը կար, որ մասնաւորապէս ուշագրաւ էր, «Շապին Գաւազիսարի առաջնորդը իր թեմին պանդուխտ ազգայիններուն մանրամասն վիճակացոյցը պատրաստելով ցոյց տուած է պատրիարքարանի թէ 102 կիներ իրենց պանդուխտ ամուսիններու օգնութեան զրկուած են 15-20 տարիներէ ի վեր, և այս պարագան պատճառ եղած է այդ լքուած կիներու ԱՆՀԱՃՈՅ կեանքին»:

Եթէ մինակ Շապին-Գաւազիսարի թեմէն 102 կիներ հոգեբանական այս հետաքրքրաշարժ դրութեան մատնուած են, վարկպարտի կերպով կարելի է մակարեւել ամբողջ թիւը ամբողջ Հայաստանի այն հայ կիներուն որոնք այն 102 կիներուն վիճակակից կը գտնուին: Արհամարհելի թիւ մը ըլլալու չէ ան ընդհակառակը:

Խօսքերնիւ անշուշտ կուզենք մեր գաւառացի այն պատուական եղբայրներուն որոնք տարիներ առաջ մնաս բարով ըսած են իրենց հայրենիքին հոգին արեւին եւ պապենական օճախին, ու անկէջ ի վեր օտար երկինքներու

տակ կը պտտցունեն պանդուխտ տխուր անգիտակից կեանքերին, քիչ քիչ մոռնալով հայրենիք, տուն տեղ, զաւակ կին, հայր մայր, բայց այն նուիրական բաները որոնք կանգուն ու արթուն կը պահեն մարդուն մէջ բարոյական կորովը, ու թող չեն խտար որ անիկա մինչեւ կոկորդը թաղուի անասնականութեան ճահիճին մէջ:

Եւ ոական հիմնուելով յիշեալ վիճակացոյցին վրայ, 102 գաւառացի ամուսիններ այս ամօթալից դրութեան մէջ դրած են ինքզինքնին, ու հէք կիները, տրտմական տարիներու անխաճան չարքէն ճանճրոցած պոյրացած, հեռուն, հայրենիքի խորքը, մէկ ոտու մով կանցնին պատնէշը հայ առանդական բարոյականին ու կեանքը կը սկսին ապրիլ «անհաճոյ» կերպով, սպասուած, համակերպուած տարիներու բովանդակ ապերառանութեամբը:

Մեր գիտնալիք, վճռելիք բանը չէ թէ այդ կիները մեղապարտ են իսկուպէս թէ ոչ: Բայց հոս կուզենք ծանրանալ այդ անխիղճ, անպարտաճանաչ ամուսիններուն ընթացքին վրայ, որ հիմակ ներկայացող այս խրոզութեան ուղղակի սկզբնապատճառն է: Այս ամուսինները ոչ միայն բաւական չեն սեպեր կսկիծը, կարօտը զօր պիտի առաջ բերէ իրենց երկարամեայ բացակայութիւնը հայրենական յարկին տակ մնացողներուն, այլ և նիւթական չքաւորութեան կը մատնեն անգին լքուածները, իրենց մօրթը մտածելով միայն իրենց փորը պարարտացնելով ու հաւանօրէն նոր ու անձանօթ հաճոյքներու մէջ ճարակ հայթայթելով անասնական ցանկութիւններու:

Գաւառացի եղբայրներ, կրթներով այն գե-

բազմոյն յոյսին վրայ թէ պարտքի եւ պատուոյ գիտակցութեան յետին նշոյլ մը գեռ կը խլըրտայ ձեր մէջ, կոչում կընենք ձեզ որ այլ եւս քիչ մը մարդկօրէն վերաբերուիք հեռուն լըբուած ձեր կիներուն ու զաւկներուն նկատմամբ, Հարստահարութեանց այդ ցաւագին հողին վըրայ չօգտեր ինչ որ կը քաշեն այդ դժբախտ արարածները, զորս կանխահասօրէն երեսի վըրայ ձգած էք և որոնք կեանքերուն էն դառնագոյնը կապրին երբ անդին դուք ալաւտ անկաշկանդ օտարութեան մէջ կը վառիք, կը լըբօսնուք, կը վայելէք ամէն առաւելութիւն:

Անթէ վերջապէս որ դուք ձեր ընթացքովը պատճառ ըլլաք հայ կնիչ անբարոյացումին և հայ ընտանեկան յարկին գառուայն խաթարմանը: Կնիչ ու զաւկի հանգէպ տարրական պարտքերու մուսցումը այն պարտքաներէն է որոնք մարդս կը վտարեն մարդկային ընկերութեան շարքերէն, ու զանիկա կը դասեն անբաններու կարգը:

Եապին-Գարահիսարի և ուրիշ հայ գաւառներու մեր հայրենակիցները որոնք նմանօրինակ պայմաններու մէջ լըբած են իրենց ամուսինները, թող իշներն իրենց խղճին խորը և հոն կարգան անաւոր պատախանատութիւնը զոր ունին այս ցաւով իրողութեան մէջ, եւ եթէ շատ ուշ չէ՝ փութան դարմանել աւերը զոր գիտակցարար սփռելու վրայ են հայ ընտանեկան յարկերուն տակ, Հոյսօտանի հեռաւոր անկիւններուն մէջ:

X

#### ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

Հետեւեալը կը հրատարակենք անխլմս կալութեան համար:

Ստորագրեալս Վառնացի այն հայերէն եմ, որոնք՝ ամառնային թէ ձմեռնային եղանակին՝ յարատե յաճախորդներն են տեղւոյս թատրոններուն, անոնք ինչ ազգի ալ պատկանին, ըսել կուզեմ թէ երբէք բարոյական և նիւթական աշակցութիւնս չեմ զլացած թատրոնի գործիչներուն:

Սակայն, հաճի-ըմանաքօի ներկայ թատերական շրջանը որքան որ ալ զուարճացուցիչ հանգամանքով մը ներկայանայ՝ իր ստացած տարօրինակութեամբը ոչ միայն թատերասէր հասարակութեան զարմանքը այլ և դժգոհութիւնը շարժելու պատճառներ ամէն վայրկեան ընծայելու փութկոտութիւն մը ցոյց կուտայ:

Առնենք, օրինակի համար, սա նպաստի ներկայացումները, և քիչ մը անկողմնակալօրէն քննենք զանոնք: Ըսելիք չիկայ որ հիմակ գոյութիւն ունեցող բոլոր թատրոններն ալ առ հասարակ քաջալերութիւն գտնելու վրայ են հասարակութեան կողմէ: Զիկայ շաբթուան մէջ գիշեր մը որ թատրոնները լեցուն չըլլան և դերասանները կուշտուկուռ չվարձատրուին և չծափահարուին: Աւելորդ է ըսել որ հասարակութեան այս քաջալերական ընթացքէն ամէնէն աւելի կօդուուն — ու ասիկա թող վերաւորիչ չըլլայ իրենց համար — թատրոններուն գլխաւոր դերակատարները՝ այր կամ կին: Կրնան ուրանալ որ երկրորդական ու երրորդական դերակատարները միշտ նուազ նպաստաւորեալները կըլլան ընդհանրապէս:

Արդ, մեր գիտցածը, — այն պայմաններուն մէջ մանաւանդ ուր կը գտնուինք — բացառիկ վարձատրութեան ու քաջալերանքի արժանի են այն դերասանները որոնք — թատրոնի ներքին կանոններուն երեսէն — շատ քիչ կը քաջալերուին իրենց աշխատութեանցը մէջ: Սակայն ինչ կը տեսնանք, ոչ միայն լիաւատ վարձատրուալը նպաստի իրաւունքը տալ կողմէ ինքզինքին, այլ և կարգ մը դերասանուհիներուն, որոնք որոշ վարձատրութիւն կընդունին՝ յաջողութեան թէ ձախողութեան պարագային, և որոնք՝ հագուած սքուած՝ անուշաւէտուած՝ հասարակութեան կը ներկայանան և քուքէն կուենան իրենց անուանը սարքուելիք ներկայացումներուն համար տոմսակ քշելու եւ կուզէ՞ք որ անկեղծօրէն ըսեմ — ու շատերու արգէն խօսած կըլլամ, — դիտցած ըլլաք — ալ յիշեալ դերասանուհիները՝ իրենց մէկ քանի տգեղ սեռի ներկայացուցիչներուն հետ անտանելի ըլլալու աստիճանին հասան իրենց տարօրինակ ձեռնարկով: Նպաստ, նըպաստ, անսպառելի նպաստ: Յետոյ՝ Վերջապէս ամէն բան սահման մը ունի: Դերասանուհի մը դուրս կելլայ վաճառատունէն՝ ծեքծեքումով մը գրպանէն ետքը քանի մը ֆրանք, ետեւէն այն ինչ դերասանուհին սիրալիր ու փաղաքշական կոտորուքով ներս կը մտնայ և կերկնցունէ յաւիտենական տոմսակը: Նպաստի, Սակայն պէտք չէ վերջապէս որ տիար դերասանները այս աստիճան չարաչար գործածեն հասարակութեան կողմէ իրենց համար ցոյց տրուած հաճոյակատարութիւնը կամ աւելի ճիշդը, արդարացի քաջալերանքը, Կընդունինք, ինչպէս արգէն ըսի, նպաստ խուճի այն դերակատարներուն որոնք՝ իրենց գիրքովը նուազ նպաստաւորուած՝ մեծ ակնկալութեամբ կը սպասեն այդ կարգի առիթներու իրենց խախտած ու խախտել նիւթականը:

քիչ մը շտկարեալու համար:

Հասկցողին համար այսչափը շատ խոսկ էր . իսկ հասկնալ չուզողին համար այս իմաստով զըրուած հատորներ իսկ անբաւական են:

Կը սիրենք յուսալ սակայն որ հասարակութեան զգացումները արտայայտող այս տողերը իրենց արդիւնքը կունենան:

Թատնաւոր

## ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

(Պատասխաններ Հինգ Հարցումներու)

(Շար. անցեալ թիւէն)

(4) Հայեր խոհեմութիւնը բրած պիտի ըլլան, եթէ ջանան թուրքիոյ ամբողջութիւնը պաշտպանել, որովհետեւ ապագայ լաւագոյն ժամանակներուն մէջ՝ թուրքիոյ իշխանութեան տակ աւելի մեծ զօրութիւն կրնան ստանալ, բան թէ Ռուսիոյ թեւակութեան ներքեւ: Բնականաբար Հայեր (ա) չեն կրնար մոռնալ իրենց կրած զըրկանքները, եւ ներկայ ընթացիկն ու եւ զօրծնական նըպաստընել, (բ) Երիտասարդ թուրքերու մատուցելիք օգնութիւնն ալ խաղաղասիրական միջոցներով ըլլալու է: Լաւագոյն կերպն է որ այս թրքական շարժումին մէջ Հայեր փոխանակ յառաջապահներ ըլլալու՝ Լոկի իրենց բարոյական ուժը տան ինպատակ Ազատական Կուսակցութեան եւ Սահմանադրական Միապետութեան, եւ արտասահման գտնուողներն ալ պարտին խուսափել կազմելով՝ դրամով եւ ազդեցութեամբ ուժ տալ Երիտասարդ թուրքիային եւ սպասեն որ վերջնական յաջողութեան մը բարեքները հնձնեն:

Հայ գաղթականներուց եւ կամ անոնց բարեկամներու կողմէն Նախագահ Բուզուքչիլին բողոք մատուցանել մը չեմ կրնար խոհեմութիւն համարել: Այդպիսի բողոք մը մասնաւոր դէպքի մը ժամանակ պէտք է մատուցուի, եւ վախճամ թէ այն ատեն ալ մեծ օգուտ մը յառաջ չկրնայ բերել, եւ ներկայիս այդպիսի գործ մը ինձ կը թուի թէ անարժէք պիտի ըլլայ:

Ձեր հարցմանց տրուած այս պատասխաններուն ու եւ մէկ կտորին հետ ալ, եթէ հարկ սեպէք, անունս գործածելու ազատ էք:

Ձերդ ճշմարտիւ Ռեիլիմ Հէյդ Ուօրտ Խմբագիր

Պոսթօն, Մայիս 10, 1902.

Սիրելի Տէր,

Ներկայ ամսոյ 7 ին գրած Ձեր նամակը ընդունած եմ, որուն մէջ Հայկական Խնդրին վերաբերեալ

Հինգ հարցում առաջարկած էք: Կը ցաւիմ ըսել թէ ինքզինքս անոնց պատասխանելու համար համար համար եմ:

Ձերի զօրութեան գործածութեան անհամակիր եմ համոզուած, եւ ուստի վերջին մարդը պիտի ըլլալի որ յեղափոխական գործունէութեան մը համար խրատ տալի, որովհետեւ յեղափոխութիւնը վերջապէս միշտ զինուած դիմագրութիւն մը կ'ենթարկէ: Հաստատապէս կը հաւատամ բարոյական յաջմունքներու եւ խաղաղասիրական միջոցներու, սակայն բոնական իշխանութիւն մը տապալելու գործնական մեթոդներու մասին իմ խօսքըս կշիռք չունի:

Ձերդ անկեղծարար

Ռեիլիմ Լոյտ Կերիսըն

(Շար.)

«Կոնսակ»



## ԱՅ ՀԱՆԴԵՍ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԻՍԼՄՍԵԱՆ

Քանի մը ամիսներ առաջ արտասահմանեան մամուլի միջոցաւ ծանուցուած այս հանդէսը Վենետիկի մէջ սկսած է հրատարակուիլ, զոր կը խմբագրեն վաղածանօթ երկու գրագէտներ՝ Տ. Արփիար Արփիարեան եւ Տ. Լեւոն Բաշալեան:

Անկեղծօրէն կը ցանկանք որ յաջողութիւն գտնէ եւ շարունակուի միշտ ախոճով կարգացութիւն սոյն ազգային անկախ հանդէսը:

Բաժնեգրինն է Տարեկան Վեցամսեայ

|                |    |   |
|----------------|----|---|
| Եւրոպայ, Փրանք | 10 | 5 |
| Ամերիկա, Տոլար | 2  | 1 |
| Ռուսիա, Րուպլ  | 4  | 2 |

Հառցէն

Հայ Հանդէս

Դասեղդա քօղալ 341

(Իքալի)

Վրնիկ

Վերջին երեսին մէջ կարդալ ուսուցիչներուն ուղղուած ազդը:

## ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՄՈՒՍԻ ՕԻՖԻՆ

(Շար. եւ վերջ անցեալ թիւէն)

— Ահ, շատ լաւ, կատարելապէս յարմար մէկ մէկ ժր վաթսուն սանդիւի. ճիշդ պահանջուած չափք. . . . . Եթէ առաջարկուած մանկամարդ կինն ալ այդ հասակը ունի. . . . .

— Պարոն, ձեզի ըսի՞ թէ աղջիկը շատ գեղեցիկ է. . . . .

— Ի՞նչ փոյթ գեղեցկութիւնը. . . . .

— Հետեւած է կարգ մը դեղարուեստներու, ինչպէս նկարչութեան. . . . . երաժշտութեան. . . . .

— Այդ ամէնը նշանակութիւն չունի ինչո՞ք համար. . . . . իր ոտքին երկարութիւնը ո՞րքան է, գիտէ՞ք. . . . .

— Այո՛, և դիպուածաւ տեղեկացայ. . . . . անցած օր իր տունը գտնուած պահուս մուճակները հագայ. . . . .

— Նստեցէք տիկին, եթէ կը հաճիք և ոտքերնիդ դրէք սա պզտիկ մեքենային վրայ. . . . . սա տեղ. . . . . ի՞նչ կ'ըսէք ասոր. . . . .

— Աթոռակ. . . . .

— Ո՛հ, այո՛, . . . . . աթոռակ. . . . .

Աննիպալ ծնրադժեց ամուսնական գործակալուհին առջև եւ կօշկակարի չափ մը հանելով գրպանէն, ոտքին մեծութիւնը չափեց. . . . .

— Օ՛լ լայթ, գոչեց Ամերիկացին. . . . . տասնըվեց սանթիմէթ չորս միլիմէթ ճիշդ ուզած մեծութիւնս. . . . . Եթէ այդ մանկամարդ կնոջ ոտքն ալ ձերինին չափ է, հետը կ'ամուսնանամ. . . . . զացէ՛ք փնառեցէք. . . . .

Տիկին Վիթըրը շատ նեղութիւն քաշեց իր յաճախորդին հասկցնելու համար թէ՛ պէտք էր մինչև յաջորդ առտու սպասել գէթ. . . . .

— Ստիպողական գործ ունիմ. . . . . շատ ըստիպողական, պատասխանեց նոր Աշխարհի այդ զաւակը. . . . . Վաղը այս ժամուն նորէն պիտի գամ. . . . . Ութ օրուան մէջ պէտք է ամուսնանամ. . . . . Այո՞ր ամսուն 15ն է, 30ին ժամ 3ին ժամագրութիւն մը ունիմ Գոլոմպիւսի մէջ. Հաճեցէք մանկամարդ կնոջ ըսել թէ Աննիպալ Բլընքէթ կը կոչուիմ, գործէ քաշուած վաճառական մը որ. . . . . 300,000 տոլարի հարստութիւն մը ունի. . . . . Բայց աւելորդ է անհանգիստ ընել զայն, եթէ վաթսուն քիլոյէն աւելի կը կշռէ. . . . . յետոյ կայ նաեւ հասակը ուս վզին շըրջապատին կրկնապատիկը պէտք է ըլլայ և վիզը դաստակին կրկինը. . . . . ուշադիր եղէք. . . . .

. . .

Յաջորդ օրը երբ Աննիպալ գրասենեակ գնաց, տիկին Վիթըրի առանձին էր տակաւին. . . . .

— Մանկամարդ աղջիկը, հաջոց եանքին. . . . .

— Հիմա պիտի գայ. . . . . պատասխանեց գործակալուհին իր ամենէն սիրուն ժպիտովը. . . . . Բայց նստեցէք, պարոն Աննիպալ. . . . . ի՞նչ գեղեցիկ մականուն. . . . . Ես Հըրթանս կը կոչուիմ. . . . .

— Ինչ փոյթ. . . . .

— Ձեզ չսպասցնելու համար, պարոն, չափեցի և կշռեցի նորատի աղջիկը. . . . .

— Ո՞րքան է. . . . .

— Կարծեմ թէ հասակը իմինիս չափ էր, բայց ստորին մեծութիւնը 1.55 մէթր է. . . . .

— Ատիկա գոյժիս չի գար. . . . .

— Կը կարծէի թէ մարմնոյն ծանրութիւնը իմինիս պէս վաթսուն քիլոկրամ է. բայց սխալեր եմ, 73 քիլոկրամ կը կշռէ. . . . .

— Շատ ծանր է. . . . .

— Գալով գաստակին, շատ մեծ է, հաճմատելով վզին. Այսպէս, չափեցի իմինս, ճիշդ կրկինն է դաստակիս, մինչ անորք մէկուկէս անգամն է. Իսկ դալով հասակիս, տեսէք ճիշդ ու ճիշդ երկու անգամն է վզիս շրջապատին, մինչ անորք երեք անգամն է. . . . .

— Ըսել է ինծի չի յարմարիր. անկարելի է. . . . .

— Բայց ուրիշ մը կը գտնեմ. ապահով եղէք. Ձեր պահանջած պայմաններով կին մը կայ տրամադրութեանս տակ. . . . .

Յետոյ, ընդմիջելով խօսքը, ամուսնական գործակալուհին յարեց. . . . .

— Ներեցէ՛ք, այդ մասին շատ տղէտ եմ. . . . .

մէկ տոլարը քանի՞ ֆրանք է. . . . .

— Հինգ ֆր. 40 սանթիմ. . . . .

— Ըսել է ձեր հարստութիւնը կը հասնի. . . . .

— 1,624,131 ֆր. Ի, այսօրուան հրապարակի գրամական տարբերութեամբ. . . . .

— Օ՛հ, անպատճառ, անպատճառ. յարմար կին մը կը գտնեմ ձեզի. . . . .

Պահ մը լուռութիւն տիրեց. Աննիպալ կը խորհէր. . . . .

— Ներողութիւն, տիկին, յարեց վերջապէս. Հաճեցէք ոտքի ելլել. կուգեմ ճշդել. հասակնիդ մէկ մէթր վաթսուն է. Գաստակնիդ տուէք. վզերնիդ տեսնեմ. լաւ է. . . . . հասակնիդ. . . . .

— Բայց պարոն. . . . .

— Ճիշդ երկու անգամն է ձեր վզին շրջա-

պատին . . . Հաճեցէք նստիլ . . . Ուրբե՛րդ . . .  
16 սանդիմէթ 4 . . . Աղէկ է . . . կշարդ . . . մը ու . . .  
նիք . . .

— Ոչ, պարոն . . . Բայց այս առտու հետա-  
քքերով թիւնս գոհացնելու համար ինքնաշարժ  
կշարդով մը կշռուեցայ ահա խիբէդը, վրան  
60 քիլոկրամ նշանակուած է . . .

— Կատարեալ է, ո՛հ, ամէն բան կատար-  
եալ . . . Տիկին ձեզի հետ կրնամ ամուսնա-  
նալ . . .

— Բայց պարոն, այսպէս չուտով . . . Անտարա-  
կոյս շատ ուրախ պիտի ըլլամ . . . Բայց դուք չէք  
գիտեր ամուսնացած կամ ամուրի ըլլալ . . .

— Ապահով եղէք . . . այրի եմ . . . եւ  
կը խոստովանիմ թէ ժամանակ անցնելէ յետոյ . . .  
թերեւ կարենամ սիրել ձեզ . . .

— Ի՛նչ փոյթ ամուսիննիդ . . . ամուսնա-  
լուծման դինը պիտի վճարեմ . . . Գոյքերնիդ  
պատրաստեցէք . . . վաղը չէ միւս օր շոգենաւ  
պիտի նստինք ժամ 4 ին . . . Ամերիկայի մէջ պի-  
տի ամուսնանանք . . . հոն աւելի շուտ կը կա-  
տարուի . . . Ու այսպէս պատուէն 30ին Քօլումպիւ-  
սի մէջ ժամագրութեանս ներկայ պիտի գտնու-  
իմ . . . Ամէն բան անթերի պիտի ըլլայ . . .  
Ահ, այսուհետեւ կրնաք փակել ամուսնութեանց  
ձեռք վտճառատունը . . . Մնաք բարով, տիկին  
Բլընքէթ . . . Անգրանտլանտեան շոգենաւի մը  
մէջ կողմնախցիկ մը պիտի վարձեմ . . .

Դ . . .

Ու պատմութիւնը կ'ընէ թէ կատարելապէս  
երջանիկ եղան անոնք . . . Երեք ամիս միայն . . .

Աւաղ երեք ամիս յետոյ ամերիկեան լրա-  
գիրները անոնց ամուսնալուծման ծանուցումը կը  
հրատարակեն . . . Տիկին Բլընքէթ 2 ուկէս քիլոկր-  
ամ աւելի ծանր կշռուելու յանցանքը գործած  
էր . . . Պայմանագրութիւնը չէր յարգած . . .

Տիկին Բլընքէթ կամ աւելի ճիշդ . . . տիկին  
Վիթլըրի խոշոր սուգանք մը առաւ իր ամուսնէն  
և առաջարկեց անոր Ամերիկայի իր թղթակիցը  
ըլլալ . . . ինչ որ Պ. Բլընքէթ սիրով ընդունեց . . .  
ահա ինչու համար սա ծանուցումը կը տեսնուի  
լրագիրներուն չորրորդ երեսը . . .

Միջազգային գործակալութիւն, Վիթլըրի եւ  
Բլընքէթ, 3000 էն մինչև 3 միլիոն ֆր . . . Մեծ  
մթերք այրիներու և նորատի աղջիկներու . . . Բա-  
ցառիկ առիթներ . . . Յարաբերութիւն երկու աշ-  
խարհներու հետ . . .

Կերեալ թէ Անիպալ Բլընքէթ հիմա մտա-

դիր է խափշիկուհի մը հետ ամուսնանալ որ  
վեց ոտք քարձրութիւն ունի և 92 քիլոկրամ կը  
կշռէ . . . իր իտէալը փոխած է . . .

Թարգմ. 2. Ն.

## ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

Կ. Ն. ԹԵՂԸ

Իմ արտիս մէջ բիրտեղ կանքեղ՝  
Նըշուեցաւ բոցը սիրոյդ . . .  
Եւ կանքեղին մէջ, խղի ճեղ,  
Հոսեցուցի կեանքս, պոս պոս . . .


Հոն՝ խորանիւն մէջ հոգիիս՝  
Ժամանակէ մ'ի վեր անյուշ . . .  
Իսկուած է քու, ո՛վ պաշտէիս . . .  
Քու ոսկեգիծ պատկերդ անուշ . . .

Այդ պատկերին սոցել ահա  
Որ հրեշտակի մ'ունի անուն . . .  
Սիրոյս կանքեղը կը մըխայ . . .  
Բոցով մը փոքր ու պրպրուն . . .

..

Իմ մարմինիս քաջ դապունգէն  
Քամուած կեանքը երբոր ցամփի . . .  
Սիրոյս կանքեղն աշ աշն ասեւ . . .  
Լոկ աշն ասեւ մարի պիտի . . .

Վ. Թ.



Երկու սիրահարներու մէջ, առտուն շատ կանուխ . . .

— Ո՛հ, հոգւոյս հատորը, ինչո՞ւ դալկացեր  
էք այսօր . . . ուր է ձեր երեսին կարմրութիւնը . . .  
(տուփին մէջ)

— Այո, էտուարտս, այսօր ես ալ ինքզինքս  
գունատ կը տեսնեմ . . .

— Պատճառ . . .

— Պատճառը . . . թուալէթն է . . .

Գինեպանի մը հետ .

— Պարոն գինեպան, այս երէկուան գինին չէ .

— Միւսին տակաւէն քաշեցի սխալմունք մը չկայ :

— Տակաւին մէջ սխալմունք չկայ բայց գինին մէջ կայ . այս գինին չուրի պէս բան մըն է :

— Կը խաբարիք, միւսին գինին է, բայց չուրէն անանկ կըլլայ . . .

— o —

Սեղանաւորի մը սենեկին մէջ .

— Պարոնը ե՞րբ կը գտնուի հոս որ դանք փոխ տուած ստակնիս ուզենք :

— Ստակնիդ ուզելու համար պարոնը հոս բնաւ չէք կրնար գտնել :

— Տունէն դուրս չելնե՞ր :

— Ո՛չ :

— Ինչո՞ւ համար :

— Հիւանդ է, եւ տաքէն դուրս չկրնար ելլալ :

— Ըսել է որ տաք եղած ատենը ստակ չի կրնար տալ, այնպէս չէ՞ :

— Այո՛ :

— Զըսե՞ս որ ձմեռը դանք :

— o —

Կատակախօս ֆրանսացի մը ամենուն ծիծաղը կը գրգռէր երբ իր ընտանիքին հնութիւնը հաստատելու համար հետեւեալ փաստը մէջ կը բերէր .

«Իմ ընտանիքիս հնութեան ապացոյցը կուզէ՞ք, մինչեւ հիմա տոկոսը կը վճարեմ գումարի մը զոր իմ նախնիքս փոխ առած են Յիսուս մանուկին Բեթղեհէմի մսուրին մէջ երթալ երկրպագելու համար .

— o —

Քարոզչին մէկը տալիք քարոզին բնաւան դըրաւ սա հարցումը, դու ո՞վ ես . Այս խօսքէն ետքը քիչ մը լուռ մնաց որպէս զի ժողովուրդը հասկնայ քարոզին միտքը :

Համբաւ մը որուն կը նայէր այս միամիտ

քարոզիչը, կարծելով թէ այս հարցումը իրեն ուղղեալ է, ոտք ելաւ ու բարձր ձայնով ըսաւ .

— Պախալ Գէորգին տղան եմ :

— o —

— Աղա՛, ոլորմութիւն մը խեղճ անկարիս .

— Տղա՛ս, դուն կոյր չես նէ՛ :

— Ես չեմ, հօսքս է անկարը, աղա՛ :

— Է՛յ, հարգ ո՞ւր է :

— Նա՛հ, հոն է, պաշխա անկարի մը հետ թուղթ կը խաղայ կոր . . .

— o —

Զուարճախօսի մը հարցուցին .

— Երբ տօքթոռ մը անուշադրութեամբ կամ անփորձառութեամբ հիւանդի մը մահուան պատճառ կրլլայ, ինչով իր խիղճը կը հանդարտեցնէ .

— Ադ ալ հարցուելիք բան է . մեռել լուսցող, դադալ ծախող, քսհանայ, մեռելաթաղ, լուսարար, ժամկոչ ու ռա կարգի շատ մը մարդոց աղօթքը վատկելով :

— —

Կ. Պոլսոյ Շիրքէթի — Խայրիէի Վոսփոր երթեկեկող շոգենաւներէն մէկուն մէջ, Ամերիկացիին մէկը ուշադրութեամբ լրագիր կարդացած ատեն .

— Գաֆէ, լէմոնատա, վիշնո :

— Կի՛թ :

— Գուրապիյէ, փանթէ՛րանիա, չէքէրլի սիմիթ :

— Կի՛թ պուրտան :

— Պէօյի քոէրէ սույու, սուճու, Սարըեար սույու, գարլը պուլլու, սիմիթ, բէյնիր :

— Կօտէ՛մ :

— Ծօ՛ Գիրգոր, կուտեմ կըսէ կոր, բեր :

Գիրգոր կը բերէ, բայց փոխանկ սիմիթը ծախելու, ամերիկեան պատուական ապտակ մը կուտէ :



—Բարե Ղազար աղա. ի՞նչ ունիս. քեզ տխուր կը տեսնամ.

—Ա՛խ, Գէորգ աղա, սուս եղիր, ինտո՞ր ըսեմ. Աստուած թշնամիս ասանկ կնկան գեմ չի հանէ. աղբար, պոչ բանի մը համար կռիւ հանելով ելաւ մօրը ասունը գնաց. հիմա չօճուիմե՛րը մայրիկ ըսելով կուլան.

—Ասոր գիւրին ճամբան կայ. գնա՛, տա՛ւ. երէցդ գտիր գործը հասկցուր, ան ինչ կընէ չընէր, ձեզ կը հաշտեցնէ.

—Գացի. . . խեղճ մարդուն գլուխը խելք չիկայ. անոր ալ երէցիկներ կնկանս պէս սրդողեր մօրը տունը դացեր է.

—Անանկ է նէ՛ առաջ գնա՛ երէցիկները գլուխը տէրտէրին հետ հաշտեցուր որ քուկին ալ գործդ տեսնուի.

Փրանսայի մէջ.

Դատաւորը. — Պարո՛ն ոճրագործ, յանցանքդ ծանր է, դատիդ ի նպաստ բան մը կը նա՞ս ըսել.

Յանցաւորը. — Տէ՛ր դատաւոր, ճիշտ 50րդ անգամն է որ այդ հարցումը կ'ընէք, եթէ փոքրիկ Յոբելեան մը ընենք, գէշ չըլլար.

## ՏԵՂԵՂՈՅՍ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ.

Պուրբէշ

Տեղւոյս Տ. Յարութիւն պապան դատ պիտի բանայ Հայեցիի գէմ, իր նուխաճիութիւնը ու պախաճիութիւնը հրապարկելուն հաւար:

Բոժ. — Կուկուկ.

Պուրկազ

Տեղւոյս Ժողովուրդը հապիւ աղատած Տ. Գարեգին փորձանքէն, գրեթէ տնոր չափ փորձանաւոր Տ. Գէորգ Հիւսիսեղեանի փորձութեանցն

ալ չիմատնուելու համար աճապարեց զայն եւս աւելի քաղաքէս ու ժամանակաւն մը համար Վառնայէն բերել տուաւ Տ. Սարգիս քահանայ Ղարիպեանը՝ որ «խաղաղութիւն ամենեցուն»ը կոխեց.

Նոյն

Առնեմ—Չտամ կը կարծէ թէ Իրաւունքի աշխատակցելով, որուն միջոցաւ ալ տակէ առաջ խաղաղ հոշակուեցաւ, ժամանակին ըրած շահատակութիւնները մոռցնել կուտայ Ժողովուրդին եւ իր կորուսած վարկը կը վերստանայ, անշուշտ նոր առաւ—փախաւութիւններ ընելու համար.

Բոժոժիկ. — Թող ան խելքովը ըլլայ.

Ռիյցա Տրակուման

Հաստատուեցաւ թէ Հազարի հայերէն բաժնին մէջ Տեղեակ ուն, Իրազեկ, Հեսիսիւրի մը, Դիսոյ, Միտքեմալիան մը, Հիմ Հնչակեան մը եւ այլ ծածկանուններով հրատարակուած յօդուածները ամենքն ալ խմբագրին գրէն ելած ըլլալով, ուրիշներու կողմէ գրուած ի պէս կուլէ եղեր կլեցնել.

Հաճի—Բանաքօ

Անվախ խմբագիրը՝ երկուշաբթի իրիկուն խալչոն թեւն տակ՝ լոբանալու համար դէպի ծով երկնցած ատեն երբ իմացաւ որ զինքը շոյողները այնտեղուանքը կը պտըտին, ամենայն անվախութեամբ վազ անցաւ ծով երթալէն.

## ԱՅԻՆԷԻ ԼԵԹԱՅԻՖ

ՊԻՆ ՊԻՐ ԱՏԷՏ

(ՄԻՒՆՏԵՐԻՃԱԹԸ)

Կիւտիւրիւճիւ ֆորաւար վէ Հիքեայէլէր. Մալիւմաթը ֆեննիյէ. Լուղաթը Լէթայիֆ. ֆեննի Էյլէնճէլէր վէ Բէսիւլի Պիլմէճէլէր.

160 սահիֆէտէն իպարէթ օլուպ, բէյտէրբէյ նէշր օլունան մէղքիւր քիթապըն պիրինճի ճիւաի խիթամ պուլուպ, իտարէխանէմիզոտ սաթըլմագտաաւըր Ֆիյ 2 ֆրանք.

## ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ՈՒՆ

ՄԻՒԹԱՐ ՊՈՆՏԱՅԻ

ԲԵՐԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Պատկերազարդ

Նախակրթարան Ա. Տարի

Գրել կարդալու բնական դրութեամբ

Նախակրթարան Բ. Տարի

Կարդալ-Խօսիլ-Գրելու դրութեամբ

Սոյն ընթերցարանը որուն Բ. հասորն ալ այս անգամ հրապարակ ելած է, կրնայ նկատուիլ իբրև կարգադրութեամբ բոլոր այն ընթերցարաններուն որոնք մինչև այսօր երևցած են: Մանկավարժական էն նոր մեթոտներուն համեմատ պատրաստուած, Պոնտային ընթերցարանը կուգայ ամբողջովին կը լեցնէ մանկավարժական պակասը որ այսօր տարիներէ ի վեր կը տիրէր մեր վարժարաններուն մէջ:

Հոս երկարօրէն չենք ուզեր զբաղիլ անոր անհամեմատ ու անքննադատելի առաւելութիւններովը, մինչև զանիկա ջերմայէս կը յանձնարարենք մեր բոլոր ուսուցիչներուն որ յանուն դաստիարակութեան փութան այս անմրցելի մեթոտով մը պատրաստուած գիրքը աւելայ մանուկին ձեռքը:

Կեդրոնատեղին է Ա. Զարպհանէլեան գրատունը, Վառնա: Գին. Ա. տարի 5 դճկն. Բ. տարի 5 դճկն.

## ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵԼԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ ալ յետոմս հասցէտոմս, նամակագրութիւն, հարօտանեկան հրաւիրագիր, մահազգ, թատերական ազդեր, տոմսակներ, գիրք և յայտարարութիւններ:

Գինները յոյժ դիւրամատչելի:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնները ճշգրտութեամբ և փութով կը կատարուին:

Այցեւորման տպագրել տնօրէններուն նուէր կը տրուի «Ինչպէս դորժածելու է այցաքարայր» անուն հրահանգի գրքով մը:

Յանձնարարութիւնները կանխիկ են:

## ԾԱԽՈՒ ԳՐՈՒ ԲԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Էջը Պարպուլի, Մոլիէնի կատակասաղ 1 արար, գին 50 սանգիմ:

Բաղդախաղ պատկեր 25 սնդ մ.

Թապաքեալ Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ. Բարեկենդանի անկուտիները կատակասաղ 1 արար, 50 սնդ.

Մահապիլիթին միջքեափաթը, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Գագանճ գօճա եախօտ էնֆիլէճի, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Լուսինեան Իշխան — Պրանտահայ Բառարան գին 25 ֆր. սոկեդրամ. Պուկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք.

Ե. Մուրատեան — Բնական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյն 2 ուկէս ֆր.

Խրթուսներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովասուն " " 25 "

Արտասուածք " " 20 "

Թ. Գ. Հինտլեան — Տեաական և գործնական Բերականութիւն Պուկարեբէն լեզուի 1 ֆր.

Շէյքսպիրի Համլէթը, սղբերգ. 2 50 ֆր.

## ԱՆՈՒՇԱԽԱՆ

## ՀԱՅԻ ՀԱՄԱՐ

Կամ Աղջկան մը յիշատակարանը

Վեպ մը իրական կեանքէ  
(Մամուլ տակ)

Այս վեպը որ կը պարունակէ իր մէջ տեղական կեանքէ գանապան պատկերներ, հրատարակութեան յանձնուած է հեղինակին կողմէն և սիրով պիտի ընդունուին բաժանորդներ հրատարակութեան գիւրութիւն ընծայուելու համար:

Բաժնեգինն է 1 ֆրանք, բոլորի ծախքը հրատարակչին վրայ:

Տպագրութիւնը աւարտելուն գրքերը կը յանձնուին բաժանորդաց:

Գոյանալիք հասցիթը ամբողջովին կը նուիրուի «Հայկական Կարմիր Խաչ» ընկերութեան:

Բաժանորդագրութեան համար գիմիլ հետեւեալ հասցէին. ՄՈՒԲԱՏ ԵՐԱՆՈՍԵԱՆ.

(Պուկարիա)

Վառնա

Печатница «Взаимность» — Варна